# «ԳԱՎԱՌԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՎԿ

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

## ԱՇԽԱՏԱՆՔ

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ՝ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Աշխատության հեղինակ՝ Զրաղացպանյան Լուսինե ժորայի

Աշխատանքի ղեկվար՝ Հակոբյան Լիլիկ Երվանդի

ԳԱՎԱՌ 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....

3 **Գլուխ.1 ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ՝ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

1. 1 Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները----------5

1. 2«Դպրոց և ընտանիք» համագործակցության զարգացման հնարավորությունները----------8

1. 3 Դասղեկի աշխատանքը աշակերտների ծնողների հետ---------- 13

Գործնական աշխատանք----------18

Եզրակացություններ և առաջարկություններ ----------20

Օգտագործված գրականության ցանկ ---------- 21

*Ուսուցումը այն ծաղկի թերթիկներից միայն մեկն է,*
*որ կոչվում է դաստիարակություն:*
*Վ. Սուխոմլինսկի*

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկային հասարակությունը իր կյանքն ու գործունեությունը կազմակերպում է որոշակի տարածության և ժամանակի մեջ, որոշակի բնակլիմայական պայմաններում,տարբեր հասարակական հարաբերություններով ,հասարակական-քաղաքական կառուցվածքով հարևան ազգությունների և ժողովուրդների հետ առկա փոխհարաբերություններով:Այս ամենի հաջող ընթացքը մեծապես պայմանավորված է ոչ միայն անձի գիտելիքով, այլև անձի վարքով, կարգապահությամբ, արժեքային համակարգով:

Անընդմեջ սովորելու գաղափարը միշտ զբաղեցրել է մարդու միտքը,իսկ ուսումնառության գլխավոր օջախը եղել ու մնում է դպրոցը, որին իրենց հույսերով ապավինում են թե՛ ծնողները , թե՛ աշակերտները:Սակայն ուսուցչի համար աշակերտը չպետք է լինի սոսկ դասը լսող, սովորող, պատասխանող և դասին մասնակից:Ուսուցչի դերը խիստ կարևոր ու պատասխանատու է. նրան է հանձնվում մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործը: **«Ուսուցիչն աշխատում է ամենապատասխանատու խնդրի վրա. նա ձևավորում է մարդուն»,-** գրել է ռուս դիվանագետ Մ. Կալինինը:Որպես ասվածին շարունակություն մեջբերում անենք Ամենայն հայոց բանաստեղծից՝ Թումանյանից .

**«Աշխարհքում ամեն բան հեշտ է, մի բան է դժվար՝ մարդ լինելը:**

Այս խնդիր լուծումը դրված է ոչ միայն դպրոցի, այլև ընտանիքի վրա: Հարկավոր է, որ ուսուցիչ-աշակերտ սերտ կապից բացի ակտիվ ու կենսական լինի նաև ուսուցիչ-ծնող երկկողմանի մշտական փոխհամագործակցությունը և փոխվստահությունը: Շատ կարևոր է, որ ուսումնական գործընթացում սովորողի հետ տարվի ճիշտ ու համակողմանի դաստիարակչական աշխատանք: Ուսուցիչն այստեղ իրավունքն չունի սխալվելու, ինչպես և ծնողը: Ուստի երկուստեք մեկ նպատակի համար աշխատանք տանելով, մոտեցման արդյունավետ եղանակներ գտնելով՝ սովորողին կարելի է բերել կառավարելի դաշտ, ցույց տալ դասից ստացած գիտելիքների կարևորությունը: Դաստիարակչական աշխատանքների հիմքում ընկած մարդասիրությունը, արդարությունը, հավասարակշռվածությունն

ու աշխատասիրությունը ևս սովորողներին պետք է մատուցել ոչ թե խոսքերով, այլ տեսանելի արդյունքով: Ուստի սովորողի ծնողը և ուսուցիչը նախ և առաջ պետք է ստեղծեն առողջ ու կառուցողական համագործակցային հարաբերություններ, որպեսզի աշխատանքի արդյունքը գոհացնի բոլոր կողմերին: Իհարկե, կրթողի դաստիարակողի, ուղղորդողի, խրախուսողի դերը սովորողի առաջադիմության, մոտիվացիայի, աշխատունակության բարձրացման հարցում հիմնականում ուսուցչին է բաժին ընկել, սակայն ուսուցիչն ավելի արդյունավետ է առաջ շարժվում, երբ սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցչի հետ ունի ընդհանուր նպատակ և նպատակին հասնելու համար անհրաժեշտ համագործակցություն:

<u>Հետազոտության թեմայի արդիականությունը:</u> Հետազոտության արդիականությունությունը պայմանավորել ենք սովորողի ծնողի և ուսուցչի միջև կառուցողական հարաբերությունների անհրաժեշտությամբ, ինչը, կարծում ենք, իր դրական ազդեցությունն է բերում կրթադաստիարակչական գործընթացի իրականացման վրա:

<u>Հետազոտության խնդիրը:</u> Կրթական բարեփոխումների հաջողության գրավականը ընտանիքների հետ ուսումնական հաստատությունների համագործակցության ապահովման խնդիրն է:

<u>Հետազոտության նպատակը:</u> Սույն հետազոտական աշխատանքի հիմնական նպատակն է մատնանշել բոլոր այն եղանակներն ու միջոցները, որոնք թույլ կտան ամրապնդել դպրոց-ծնող համագործակցությունը՝ նպատակ ունենալով նպաստել սովորողի ուսումնառության որակի բարձրացմանը:

# ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒՄԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ՝ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

## 1. 1 Ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները:

Հայտնի է, որ կրթական համակարգի առաջին օղակը եղել և մնում է ընտանեկան դաստիարակությունը:Ուստի բարեփոխումների իրականացումն անհրաժեշտ է սկսել հենց այստեղից:Այսինքն՝ հարկ է բարձրացնել ընտանեկան դաստիարակության որակը:

Ընտանիքը սոցիալական առաջին ինստիտուտն է, որտեղից սկիցզբ է առնում կյանքի շարունակականությունը:Յուրաքանչյուր ծնող իր առաջ պետք է դնի հետևյալ հարցադրումները. «Ինչպիսի՞ երեխա կարող եմ դաստիարակել» , « Ո՞րն է իմ դերը նրա զարգացման համար», « Ի՞նչ գիտեմ երեխայի ու նրա զարգացման խնդիրների վերաբերյալ» և այլն:Երեխայի դաստիարակության հարցում տարբեր ընտանիքներ ունեն տարբեր մոտեցումներ:

Կան ծնողներ, ովքեր երեխաների դաստիարակության հարցում առաջնային են համարում իրենց կամքն ու պահանջները և ուշադրություն չեն դարձնում երեխայի անհատականության, զգացմունքների և հույզերի ճիշտ ձևավորման վրա:Կան նաև հակառակ բևեռում գտնվող ծնողներ:Նրանք գտնում են, որ երեխայի դաստիարակության մեթոդները չպետք է խիստ լինեն:Հարկավոր է երեխային տալ ազատություն, և նա ինքը կընտրի իր գործունեության տեսակը:Եվ կա այս երկու մոտեցումների կենտրոնում գտնվող դաստիարակության մի ոճ, երբ ծնողն աչալուրջ է, տրամաբանության սահմաններում վերահսկում է երեխայի զարգացումն ու գործունեության բոլոր տեսակները, բարեկամական և ընկերական հարաբերություններ է հաստատում իր ու երեխայի միջև, և իրենց հարաբերություններում բացառվում է սուտը ու շինծու որևէ տարր:Այդ դիրքորոշումը ընտրած ծնողները երեխային տալիս են որոշակի ազատություն, և դա էլ ապահովում է փոխադարձ վստահության մթնոլորտ:Մակարենկոն այս առիթով ասել է, որ ծնողների և երեխաների միջև բարեկամական հարաբերություն ստեղծելը վատ չէ, եթե դա լուրջ է, բայց նաև այդ հարաբերություններում պետք է պահել չափի զգացումը:

Ծնողական դաստիարակության մեջ կարևորագույն պայմանն այդ «չափի զգացողության» վերահսկումն է՝ տարբեր արարքների ճիշը տեղն ու ժամանակը որոշելը:Հենց այդ «չափ» հասկացությունն էլ միշտ և առավել ևս այսօր խիստ հարաբերական է . դրա սահմանները զատորոշվում են ըստ դաստիարակողի իմացական մակարդակի և անձնական մշակույթի:

Բազմաթիվ հետազոտություններ ապացուցում են, որ երեխայի դաստիարակությունը պետք է սկսել վաղ հասակից և ծնողները պետք է հստակ գիտակցեն, թե որքան կարևոր է իրենց դերը երեխայի անձի ձևավորման և զարգացման գործում:

Ընտանեկան դաստիարակությունը որքան կարևոր, նույնքան էլ չվերահսկվող գործընթաց է:Այդ է պատճառը, որ այս ասպարեզում կարելի է գտնել բազում թերություններ և բացթողումներ:Շատ ծնողներ չեն գիտակցում, որ հարկավոր է երեխայի դաստիարակությամբ զբաղվել վաղ հասակից և այդ հարցում պետք է լինել չափազանց հետևողական:Այս են վկայում մեր շրջապատում ծնողների կողմից արվող բազմաթիվ արտահայտություններ. «Երեխան թող մեծանա, հետո կշտկեմ,կուղղեմ նրա գործած այս կամ այն սխալը», «Հիմա փոքր է, չի հասկանում, թող անի , ինչ ուզում է»,«Այս մի մատ երեխան ինչ է հասկանում» և այլն:Սա միանշանակ սխալ մոտեցում է:

Ծնողները պետք է գիտակցեն, որ վաղ տարիքից երեխայի մեջ ի հայտ են գալիս անձնային լավ կամ վատ հատկություններ, որոնք պետք է զարգացնել կամ ժամանակին շտկել, և որ ամենակարևորն է ճիշտ միջոցներով և եղանակներով:Իսկ դաստիարակության միջոցները և եղանակները բազմազան են հատկապես ներկա տեղեկատվական պայմաններում:Երեխայի դաստիարակության, անձի ձևավորման և զարգացման մասին տեղեկատվության պակասը կամ բացակայությունը հանգեցնում են բազմաթիվ խնդիրների, որոնք էլ առաջ են բերում անհանդուրժողականություն, հակասություններ ու վեճեր ծնող-երեխա հարաբերություններում:Ի դեպ, այս երևույթները պայմանավորված չեն կոնկրետ տարիքային փուլով, ուղղակի ավելի են դրսևորվում դեռահասության ժամանակաշրջանում:

Ընտանեկան դաստիարակության խնդիրների կարգավորման դժվարություններ հիմնականում ի հայտ են գալիս հետևյալ պատճառներով.

- ✔Ծնողները չեն կարողանում լիարժեք վերլուծել ստեղծված իրավիճակները և ընտրել քայլերի ճիշտ հաջորդականությունը,
- ✔Երեխայի դաստիարակությամբ հիմնականում զբաղվում են մայրիկները,
- ✔Երեխայի դաստիարակությունը կրում է աստիճանակարգային/հիերարխայիկ բնույթ,
- ✔Երբեմն ծնողների կողմից տարվող դաստիարակչական աշխատանքները «արգելափակվում» են տատիկների կողմից,
- ✔Ընտանիքի հայրը հանդես չի գալիս երեխայի դաստիարակություն իրականացնողներից մեկը, այլ սոսկ որպես նրան կերակրող և նյութապես ապահովվող սուբյեկտ:

Տունն ու ընտանիքն են ստեղծում մարդուն, ընտանիքում են դրվում բարոյական և ֆիզիկական կրթության հիմքերը և ցանվում բնավորության սերմերը:

Հայրն ու մայրը առաջին ուսուցիչներն են, որոնք երեխայի մեջ դնում են բարոյական արժեքներ:Ընտանեկան դաստիարակությունը անհատի ձևավորման նպատակասլաց, համակարգված գործընթաց է :

Այսօր ընտանեկան դաստիրակության մակարդակի բարձրացման կարևոր նախադրյալ է հայրիկների դերի իմաստավորումն այդ գործընթացում:Այդ հարցը ինչ –որ չափով իր վրա է վերցնում ուսումնական հաստատությունը՝ կազմակերպելով ծնողների, հատկապես հայրիկների ակտիվ ներգրավվածությունը երեխայի ուսումնադաստիարակչական գործընթացում:Ուստի հարկավոր է հաճախակի կազմակերպել սեմինարներ, խորհրդատվություններ, ծնողական ժողովներ և այլն:

***Այս աշխարհը չափազանց անհանգիստ է. մի վայրկյան կա՞նգ առեք և նայե՞ք ձեր երեխայի աչքերին:Ինչ են սպասում նրանք ձեզանից:Նվիրվե՞ք ձեր երեխաներին ,և նրանք երախտապարտ կլինեն ամբողջ կյանքում,իսկ դուք ապագայում կվայելեք երջանիկ ծերություն:***

Մասարու Իբուկա /Ճապոնացի ճարտարագետ և գրող/

## 1. 2 «Դպրոց և ընտանիք» համագործակցության զարգացման հնարավորությունները

Ազգի, պետության, գեղեցիկ ու բարվոք ապագայի կերտումը էապես պայմանավորված է նրա քաղաքացիների կրթության և դաստիարակության մակարդակով:Անժխտելի փաստ է, որ ազնիվ, առաքինի, խելացի, կարգապահ, դաստիարակված երեխաները հիմնականում այն ընտանիքների երեխաներն են, ովքեր ապրում են այնպիսի ընտանիքներում , ու իշխում է կարգուկանոնը, հարգանքը միմյանց, շրջապատի, դպրոցի նկատմամբ, պատվասիրությունը, հայրենասիրությունը և բարոյականությունը: Ուստի անհրաժեշտ է կարևորել դպրոցի և ընտանիքի արդյունավետ համագործակցությունը:«Սովորողի ծնողնիրավունք ունի համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշծատողների հետիր երեծայի կրթության կազմակերպման հարցերով 1»:

Կան ծնողների հետ համագործակցության ,տարվող աշխատանքների տարբեր ձևեր՝ առանձին ընտանիքների հետ հանդիպումներ, դրական ծնողավարության սեմինարներ, որոշակի մոդուլով մշակված ծնողական ժողովներ, որոնցում հիմնականում ուշադրություն է դարձվում սովորողների բարոյական, հոգեբանական առողջության պահպանման և նրանց մեջ անձնային որակների զարգացման հարցերին:

Անժխտելի փաստ է, որ կյանքում դրսևորվող բացասական երևույթները, հասարակության արմատական փոփոխությունները, ծնողների որոշ մասի անտեղյակությունը և երեխաների նկատմամբ անտարբերությունը ազդում են դպրոցականների վարքագծի ձևավորման վրա: Ելնելով նշված խնդիրներից՝ անհրաժեշտ է զարգացնել, ամրապնդել **դպրոց- ընտանիք** համագործակցությունը:

1. ՀՀ Հանրակրթության մասին օրենք, հոդված 28, կետ2

**Դպրոց- ընտանիք** համագործակցությունը կազմակերպելիս պետք է հենվել նշված երեք կողմերի վրա.

1. ընտանիքի այն անդամի, որի հետ երեխան կիսվում է և վստահում և որն ավելի շատ է զբաղվում երեխայի հարցերով

2. դպրոցի և կրթական միջավայրի /ուսուցիչներ, որոնք ավելի են ընդունված երեխայի կողմից/ վրա, որոնք անմիջականորեն առնչվում է երեխայի հետ,

3. այս երկու օղակների կապի ,անշուշտ, երեխայի վրա, քանի որ համագործակցությունը պայմանավորված է երեխայով և նպատակաուղղված է նրա բնականոն զարգացմանը:

Վերը նշվածից կարելի է հետևություն անել, որ արդյունավետ համագործակցությունը հիմնվում է **դպրոց- սովորող- ընտանիք** եռամիասնության վրա:Սովորողի հաջողված ուսումնառության և դաստիարակության համար պատասխանատու են թե՞ դպրոցը և թե ՞ընտանիքը:

Ժան Ժակ Ռուսոյի կարծիքով՝ ընտանիքից հետո յուրաքանչյուր դաստիարակ ավելի քիչ ազդեցություն ունի երեխայի վրա, քան նախորդը. ահա ինչու է այդքան կարևոր ընտանեկան դաստիարակությունը:

Մակարենկոյի կարծիքով՝ երեխային դաստիարակում է ամեն ինչ՝ թե առարկաները, թե երևույթները, սակայն ամենից շատ մարդիկ և առաջին հերթին՝ ծնողները:

Մեր ժամանակի կարևորագույն խնդիրն է ծնողների ներգրավումը դպրոցի գործունեության մեջ:Ցավոք, ծնողների մեծ մասը չի գիտակցում , թե ինչքան անհրաժեշտ է իր մասնակցությունը զավակի կրթական գործընթացին:

Ինչպիսի՞ն է **ընտանիք – դպրոց** համագործակցության մակարդակը մեզ մոտ:Որքանո՞վ է ծնողը ներգրավված դպրոցական առօրյայի մեջ, ի՞նչ աշխատանքներ են իրականացվում դպրոց- ընտանիք կապերը զարգացնելու ուղղությամբ:

Մեր դպրոցների մեծ մասը տիրապետում է համագործակցության ավանդական ձևերին՝ ծնողական ժողով, օրագրի վարում, որը վերջին տարիներից թղթայինից դարձավ էլեկտրոնային տարբերակով, ինչը, ցավոք, անհասանելի է ծնողներին տարբեր պատճառներով, հեռախոսազանք/ի դեպ,սա տարածված լայն տարբերակ է/, նամակ-գրություն/ SMS/ :

Սովորողի բնականոն զարգացման ու դաստիարակության գաղափարն է միավորում ծնողներին և ուսուցիչներին, ուստի համագործակցությունը պետք է ուղղված լինի հենց այդ գաղափարի բնականոն ու արդյունավետ իրականացմանը: Ծնողների ներգրավվածությունը սովորողի դպրոցական կյանքին ոգևորիչ է նաև ուսուցչի համար, քանի որ դժվարությունների առաջացման ժամանակ, վերջինս կարող է հույս դնել ծնողական օգնության վրա: Ծնողի մասնակցությունը իր երեխայի կրթությանը՝ նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին: Ծնողներն իրենց երեխաների ուսումնական գործընթացում ներգրավված են որպես լիիրավ գործընկերներ և մասնակցում են երեխայի կրթության մասին որոշումների ընդունմանը : Ծնողների ներգրավվածությունը երեխայի դպրոցական կյանքին և ուսումնական գործընթացին իր մեջ ներառում է.

- դպրոցական միջոցառումներին հնարավորինս շատ մասնակցություն,
- երեխայի կողմից լավ կատարված աշխատանքի խրախուսում և գովաբանում,
- դպրոցի համար խելամիտ ու հիմնավոր պահանջների նախանշում,
- ուսուցիչների հետ կանոնավոր հանդիպումներ և սովորողների առաջընթացի ու վարքային դրսևորումների քննարկում,
- տնային առաջադրանք կատարելիս սովորողին օգնության ցուցաբերում և ուղղորդում,
- ծնողական ժողովներին ակտիվ մասնակցություն
- գործունեություն ծնողական խորհրդում,
- այլ ծնողների հետ քաղաքավարի շփում, համագործակցություն:

Նման միջավայրի ապահովումը կարող է խթանել ուսուցիչի աշխատանքի արդյունավետությունը, քանի որ ծնողների հետ համատեղ ջանքերով կարելի է հասնել սովորողի՝ ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ կարողունակությունների անցնցում ձևավորմանը: Սովորողին, ծնողներին և ուսուցիչներին պետք է միավորեն ընդհանուր մտահոգություններ, խնդիրներ, նպատակներ ու դրանց հասնելու լուծումներ, եղանակներ: «Սովորողի ծնողն իրավունք ունի

համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով1»:

Երբեմն էլ օգնելու փոխարեն հստապահանջ ծնողը իր անվերջանալի հանձնարարություններով կամ անվերջ դժգոհելով կարող է երեխայի մեջ առաջացնել հիասթափությունը, հակակրանք ուսման , ուսուցչի կամ առհասարակ ամեն ինչի նկատմամբ:

Ուսումնական խնդիրներից բացի ՝ դպրոցը լուծում է շատ այլ հարցեր, ինչպիսիք են երեխայի սոցիալականացումը, բարոյական դաստիարակությունը, ֆիզիկական և հոգեկան ներդաշնակ զարգացումը և այլն:Այսօր անկասելի վազք է նկատվում տեղեկատվության տարափի և նորահայտ փաստերի մեկնաբանումների հետևից, և անտեսվում են մի շարք կարևոր բաներ՝ սովորողների հոգեկան գործընթացների և
անձնային որակների զարգացման, նրանց մեջ ընթերցասիրության, ինքնուրույն ձևավորման խնդիրները:Ամենօրյա նպատակաուղղված աշխատանքով հարկավոր է սովորողների մեջ զարգացնել արժեքային համակարգի բաղադրիչ մաս կազմող որակներ՝ հոգատարություն շրջապատի հանդեպ, սկզբունքայնություն, լայնախոհություն, համարձակություն և այլն:Նախ և առաջ պետք է լավ ճանաչել երեխային:Իսկ դրա համար պետք է լավ ճանաչել նաև նրա ընտանիքը:«Ճանաչում ենք արդյոք մեր երեխաներին». այս հարցի պատասխանը բխում է հետևյալից, եթե կարողանում ենք և գիտակցում.

 Երեխայի մեջ պետք է գնահատել նրա անհատականությունը, ինքնուրույնությունը, այն, որ նա անսովոր է, այնպիսին չէ, ինչպես բոլորը:Պետք չէ վախենալ այն բանից, որ նա չի համապատասխանում համընդհանուր չափանիշներին:Հոգոբաններն ասում են, որ նա, ով «չի տեղավորվում կաղապարների մեջ», տաղանդ է. . .

 Երեխաների մեջ սերմանել հպարտության զգացողություն. «Ես կամ աշխարհում , ուստի ես արժեք եմ»:Այն մարդը, ով հարգում է ինքն իրեն, հարգանք է վայելում նաև ուրիշներց, ով սիրում է իրեն, սիրվում է նաև ուրիշների կողմից:

 Երեխան երբեք չի ներում անհարգալից վերաբերմունք իր նկատմամբ. չէ՞ որ նա էլ շատ պարզ գիտակցում է, որ հաճախ սիրում են հենց այնպես, առանց

որևիցե բանի, իսկ հարգում են անպայման ինչ-որ բանի համար կամ ինչ-որ պատճառով:

 Յուրաքանչյուր երեխայի համար պետք է որոշել նրա հնարավորությունների սահմանները:Չի կարելի բռնանալ նրա անձի և առողջության վրա՝ հարկադրելով լինել Հայկի, Գոհարի, Դավիթի կամ Անիի պես:

 Անհրաժեշտ է բացատրել երեխային, որ յուրաքանչյուր մարդ իրավունք ունի սխալվելու. չէ՞ որ սխալների վրա են սովորում, և միայն թույլ մարդը չի ներում սխալները:Ուժեղն ընդունում է դրանք:

 Ներողություն խնդրել երեխայից, եթե ճիշտ չենք, այդ դեպքում նա էլ կկարողանա ներողություն խնդրել և ներել:

 Կարելի է սովորել ՝ չնկատելով ուրիշների սխալները և բացթողումները, այլ ավել շատ աշխատել սեփական անձի վրա, քանի որ ինպես ժողովուրդն է ասում. «Իր աչքի գերանը թողած՝ ուրիշի աչքի փուշն է տեսնում»:

 Ընդունել երեխային այնպիսին, ինչպիսին նա կա՝ իր թերություններով և սխալներով:Կարիք չկա աղճատել նրա մանկությունը՝ անվերջ նախատելով նրան անհաջողությունների համար. չէ՞ որ մանկությունը սևագրություն չունի:

 Երեխայի հետ դաժան վարվեցողությունը միայն խորացնում է նրա թերությունները:Այնտեղ, որտեղ վախ կա, չի կարող լինել ո՞չ ընկերություն, ո՞չ վստահություն:Վերացնելով հոգեկան կապը երեխայի և իրենց միջև՝ծնողներն իրենց համար ապահովում են միայնակ ծերություն ապագայում:

 Երեխալին պետք է սովորեցնել ուժեղ լինել. չի կարելի արհեստականորեն նրան ետ պահել դժվարություններից, այլ պետք է հենց մանկությունից վարժեցնել նրան:

Իմաստուն ասացվածքն ասում է. «Բառի նկատմամբ չափազանց ուշադի՞ր եղեք, որպեսզի այն մտրակ չդառնա ու չդաղի նուրբ մաշկը՝ողջ կյանքում թողնելով կոպիտ սպիներ»:

Հետևաբար ասվածից բխում է , որ **ընտանիք- դպրոց** արդյունավետ համագործակցության հիմնական ուղիներն են՝

 հետևողական , հստակ , երկկողմանի համագործակցություն,

 փոխադարձ վստահություն,

-  ծնողների ներգրավման բազմաթիվ միջոցներ:

Երկկողմանի համագործակցության կանոնավոր հնարավորություններ միջոցով ծնողներն ու մանկավարժները սերտորեն համադործակցում են ` ի շահ երեխայի բնականոն զարգացման:

Ծնողների հետ աշխատելիս ուսուցիչը պետք է ցուցաբերի ստեղծագործական և ճկուն մոտեցումներ՝ առաջնորդվելով հետևյալով.

-  ժողովները և հանդիպումները կազմակերպել ծնողներին հարմար ժամերին,
-  թույլ տալ, որ ընտանիքն ինքը որոշի իր մասնակցության լավագույն ձևը ընդհանուր գործին,
-  ընտանիքի հետ սերտ կապ
-  լինի համբերատար,
-  հենվի երեխայի և ընտանիքի ուժեղ կողմերի վրա,
-  յուրաքանչյուր առանձին դեպքի արձագանքի դրականորեն,
-  պահպանի գաղտնիությունը:

Ծնողը ուսուցչի հետ համագործակցելիս պետք է առաջնորդվի հետևյալով.

-  դրական վերաբերմունք ձևավորի դպրոցի և երեխայի ուսումնական գործընթացի նկատմամբ,
-  ծանոթանա ներկայումս կիրառվող կրթական համակարգին,
-  հանդիպումներ ունենա ուսուցչի հետ
-  օգնի երեխային՝ ձեռք բերելու սեփական խնամքի հետ կապված որոշ հմտություններ:

## 1. 3 Դասղեկի աշխատանքը աշակերտների ծնողների հետ

Դասղեկը դպրոցում իրականացնում է խիստ պատասխանատու գործառույթ:Նա դաստիարակչական աշխատանքի կազմակերպիչն է տվյալ դասարանում, աշակերտների դաստիարակն ու ղեկավարը:Միաժամանակ դասղեկը միավորում է դպրոցի ուսուցիչների, աշակերտների ծնողների և հասարակության լայն խավերի ջանքերը՝ ուղղված սովորողների ներդաշնակ գործունեությանը նպաստող պայմանների ապահովմանը:

Հինգերորդ դասարանից դպրոցի կապը ընտանիքի հետ իրականացվում է գլխավորապես դասղեկի միջոցով:Իհարկե, յուրաքանչյուր ուսուցիչ ինչ-որ չափով շփվում է դպրոցականների ծնողների հետ, սակայն դա կրում է դիպվածային բնույթ:Իսկ դասղեկները մշտական և հետևողական կապ են պահպանում տվյալ դասարանում ընդգրկված աշակերտների ընտանիքների հետ:Ամենից առաջ դա անհրաժեշտ է սովորողների վրա դպրոցի ու ընտանիքի կողմից դաստիարակչական ներգործունեության միասնականությունն ապահովելու համար:Հանդիպելով ծնողներին՝ դասղեկը նրանց ներկայացնում է դպրոցի

պահանջները, նա հորդորում է , որ բոլոր ծնողները իրենց երեխաների համար ուշադիր և հոգատար խորհրդատուներ լինեն:

Ծնողների մեծամասնությունը գիտակցաբար ընդունում է ուսուցիչների պահանջները, որոշ ծնողներ, պարփակվելով իրենց ներընտանեկան խնդիրների շրջանակում,հասարակական դաստիարակության պահանջներին հակադրում են երեխաների հետ փոխհարաբերությունների իրենց տարբերակված, հաճախ անընդունելի գիծ և ոճ:Ոմանք էլ «երես են տալիս» իրենց երեխաներին, բավարարում նրանց բոլոր պահանջներն ու քմահաճույքները և այդ կերպ հեռու են պահում իրենց զավակներին աշխատելուց և աշխատելու պարտականությունից:Նման ընտանիքներում երեխաները չեն կատարում նույնիսկ առտնին պարզ աշխատանքները և մեծանում են որպես հասարակության փափկակյաց , եսամոլ անդամներ:Նրանց մեջ ծլարձակում են ծուլության և կամակոր պահանջկոտության վտանգավոր սերմեր:Այս ամենն ի վերջո անդրադառնում է նաև ուսումնական աշխատանքի վրա:Ոմանք վատ են սովորում, չեն կատարում տնային առաջադրանքները:

Այս թերությունների հայտնաբերումը ենթադրում է դասղեկի՝ մանկավարժական լուրջ աշխատանք և կոնկրետ միջոցների ձեռնարկում:Նա ծնողներին պետք է բացատրի , որ տնային աշխատանքներին երեխաների անձնական մասնակցությունը նպաստում է խիստ արժեքավոր հատկությունների ձևավորմանը, կամքի և բնավորության կոփմանն ու հղկմանը:Դասղեկը աշակերտական կոլեկտիվի ազդեցությամբ երեխաներին ընդգրկում է տարբեր տեսակի հանրօգուտ աշխատանքներում, ձևավորում բարեխիղճ վերաբերմունք հասարակական հանձնարարությունների հանդեպ:

Հաճախ ընտանեկան դաստիարակության մեջ թույլ է տրվում մեկ ուրիշ ծայրահեղություն՝ չափից ավել խստություն երեծաների նկատմամբ, նրանց ինքնուրույնության ճնշում:Երբենմ էլ ընտանեկան և դպրոցական դաստիարակության միջև անհրաժեշտ միասնության բացակայությունը բարդացնում է երեխայի գիտակցության ու վարքի ներդաձնակության ձևավորումը:Դպրոցի և ընտանեքի սերտ համագործակցությունը հնարավորություն է տալիս ապահովել երեխայի նկատմամբ պահանջների ու դաստիարակչական ներգործության միասնականությունը:

Դասղեկի կողմից կազմակերպվող մանկավարժական գործընթացները հենվում են տվյալ դասարանի աշակերտների ընտանիքներում ձևավորված լավագույն ավանդույթների ու մեթոդների վրա:Երեխաների ներդաշնակ

դաստիարակության համար ընտանիքի բարերար ազդեցության ուժեղացման նպաստավոր գործոններն են ծնողների նյութական վիճակի բարելավումը, կրթական և գաղափարական ընդհանուր մակարդակի բարձրացումը, ազատ ժամանակի ավելացումը, ընտանիքում դաստիարակության շրջանակի ընդլայնումը՝ տատիկ-պապիկների ընդգրկմամբ:Դասղեկների ծնդիրն է օգնել ծնողներին՝ գտնելու երեծաների հետ հաղորդակցվելու բարեհարմար եղանակներ:Անվանի մանկավարժներից մեկն ասել է, որ ընտանիքում երեխաների դաստիարակությունը միաժամանակ ծնողների ինքնադաստիարակությունն է:

Հայտնի է, որ օրվա մեծ մասն ածակերտներն անցկացնում են դպչոցից դուրս՝ տանը, բակում, թողոցում: ՎԲացի դրանից , տարվա մեջ մոտավորապես 150 օր նրանք լրիվ ազատ են ուսումնական պարապմունքներից:Այդ համակարգով է կարգավորվում նաև ծնողների և լայն հասարակության մասնակցությունը դպրոցականների դաստիարակության շարունակական գործընթացին:

Ծնողների հետ տարվող աշխատանքի արդյունավետության ապահովման նպատակով կիրառվում են նրանց հետ կապի տարբեր ձևեր:Նպատակահարմար է ծնողների հետ համագործակցությունը կազմակերպել **խմբային և անհատական ձևերով**:

**Անհատական զրույցի** ժամանակ քննարկվում են դպրոցականի կյանքի և աշխատանքի դիպվածներ, վարքագծի կոնկրետ օրինակներ, ուղիներ են նշվում երեխայի ուսումնական գործունեության, աշխատանքում և առօրյա վարքագծում նկատվող թերությունների ծտկման և դժվարությունների հաղթահարման համար:

Մանկավարժը ոչ միայն խորհրդատու պետք է լինի, այլև պետք է ընդունի ծնողի առաջարկությունները. նա չպետք է սովորեցնողի դերի մեջ մտնի, այլ աշխատի ձեռք բերել ծնողի վստահությունը և անկեղծությունը:Նախընտրելի է ծնողների հետ զրուցելիս օգտագործել հետևյալ խոսելաոճը. «Իսկ Դուք ի՞նչ կառաջարկեք»,«Կարելի է քննարկել», «Կարծում եմ՝ Դուք էլ հարցին այդպես կվերաբերվեք»:

Ծնողին դպրոց պետք է հրավիրել ոչ միայն աշակերտի կարգապահությունը խախտելու, վատ վարք դրսևորելու կամ վատ սովորելու ժամանակ, այլև պարբերաբար՝ նրա ընդունակությունը որևէ բնագավառում հայտնաբերելու,

զարգացնելու,երեխայի հետ արտադասարանական որևէ աշխատանք կազմակերպելու, լավ սովորելու համար խրախուսելու նպատակով:

**Ծնողական ժողովը** ընտանիքի հետ դասղեկի կապի ամենատարածված ձևն է: Ծնողական ժողով հրանիրելուն դասղեկը պետք է հանգամանորեն նախապատրստվի: Լավ նախապատրաստված և հմտորեն անցկացված ժողովներն օգնում են ծնողներին, որ նրանք արդյունավետ կազմակերպեն երեխաների դաստիարակությունը: Հարկավոր է, որ դասղեկը չսահմանափակվի միայն առաջադիմության արդյունքների և կարգապահության վիճակի մասին տեղեկություններ տալով:Կարևոր է ՝ ծնողներին ծանոթացնել դաստիարակության դրական մոտեցումներին, քննարկել դեռահասության հետ կապված հարցեր , օգնել բարդ հարցերում և այլն: Ուստի կարելի է սահմանել ծնողական ժողովների հետևյալ տեսակները՝ կազմակերպչական, թեմատիկ,համադպրոցական, ամփոփիչ :

Ծնողական ժողովների ժամանակ ուսուցիչը պետք է ունենա հստակ սահմանված օրակարգ, որի համաձայն պետք է անցկացնի այն: Ժողովն անցկացնելիս ուսուցիչը պետք է նկատի ունենա հետևյալ սկզբունքները և պետք է հենվի վարքագծի հետևյալ կանոններին.

- կատարի ծնողների հաշվառում.
- ծնողներին ներկայացնի ժողովի օրակարգը.
- ժողովը սկսի բարձր տրամադրությամբ և ողջույնի խոսքով.
- խոսքի, ինտոնացիայի, ժեստերի և այլ միջոցներով ցույց տա ծնողներին իր հարգանքը և ուշադրությունը նրանց հանդեպ:
- խոսի նախ դրական հարցերի մասին.
- օրակարգի յուրաքանչյուր հարց քննարկելուց հետո անպայման լսի ծնողների առաջարկությունները.
- առանձին աշակերտների խնդիրները չդարձնի ընհանուր քննարկման թեմա. աշակերտների բացասական կողմերը ներկայացնելիս լինի նրբանկատ.

● փորձի հասկանալ ծնողներին, ճիշտ որոշի խնդիրները, որոնք առավել անհանգստացնում են նրանց:

● խոսել ծնողների հետ հարկավոր է հանգիստ և բարեհամբույր: Կարևոր է, որ բոլոր աշակերտների, այդ թվում և «ռիսկային խմբի» երեխաների ծնողները ժողովից գնան հավատով լցված դեպի իրենց երեխան.

● հետևի ժամանակին. ժողովը չպետք է տևի մեկուկես ժամից ավելի

● ժողովն ավարտի որևէ հետաքրքիր և ուրախալի տեղեկության հաղորդմամբ. յուրաքանչյուր ծնող ժողովից պետք է հեռանա լավ տրամադրությամբ, հաջորդ ժողովին անպայման մասնակցելու մեծագույն ցանկությամբ:

● ծնողական ժողովի ընթացքում համատեղ աշխատանքի արդյունքը պետք է լինի այն, որ ծնողները դառնան ավելի վստահ այն բանում, որ իրենց երեխաների դաստիարակության հարցում կարող են հենվել դասղեկի և դպրոցի մյուս ուսուցիչների աջակցության և օգնության վրա:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ այն սովորողները, ում ծնողներն ակտիվ են իրենց երեխայի դպրոցի և ուսումնառության հարցերում, կառուցողական են ուսուցիչների հետ համագործակցության ժամանակ, կարող են ունենալ ավելի շատ ձեռքբերումներ, որոնց շարքում են.

 սովորողը դրական է տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունի,

 ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ

, ավելի լավ հարաբերություններ ունեն ուսուցիչների հետ վստահում ու հավատում են նրանց,

 ուսումնառության գործընթացին ավելի պատասխանատու են մոտենում,

 փորձում են պահել բարեվարքության կանոնները,

 կարգապահությանն ընդառաջ են գնում,

 դասարանական կոնֆլիկտերը շրջանցում են:

Կարևոր են նաև ծնողական ժողովների ժամանակ **մանկավարժական համակողմանի խորհրդատվությունները:** Առանձին դեպքերում ուսուցիչը նպատակահարմար կարող է համարել ծնողի հետ անհատական զրույցը: Դրա անհրաժեշտությունը ծագում է այն ժամանակ, երբ իրավիճակը դառնում է անվերահսկելի ու պահանջվում է արտակարգ օգնություն: Այս փուլում գլխավոր խնդիրը ոչ միայն մանկավարժական տեղեկատվությամբ ընտանիքն ապահովելն է, այլև ծնողներին հուզական աջակցություն ցույց տալը: Այստեղ մեծ անելիք ունի նաև **դպրոցի հոգեբանը 2**: Բերենք վերջինիս պաշտոնային պարտականություններից մի քանի օրինակ: Հանրակրթական ուսումնական

2. ՀՀ Կառավարության որոշում /9-րդ կետի դրույթներ

հաստատության հոգեբանը ուսումնական հաստատությունում աշխատանքներ է

տանում սովորողների հոգեկան առողջության և անձի կայացման ու զարգացման ուղղությամբ, աջակցում է ուսումնական հաստատությունում բարենպաստ հոգեբանական մթնոլորտի և սովորողների զարգացման համար լիարժեք պայմանների ստեղծմանը, դիտարկում, բացահայտում և կանխում է անձի հոգեկան գործընթացների, վիճակների դժվարությունները և շեղումները, հոգեբանական խորհրդատվությամբ աջակցում է ծնողներին (կամ նրանց օրինական ներկայացուցիչներին), մանկավարժներին և կրթական գործընթացի այլ մասնակիցներին սովորողների զարգացման, ուսուցման և դաստիարակության հարցերում, ինչպես նաև տալիս է անհրաժեշտ տեղեկատվություն երեխայի զարգացման համար լիարժեք պայմանների (այդ թվում՝ առանձնահատուկ) ստեղծման վերաբերյալ :

Ուսուցչի հետ համագործակցության արդյունքում ծնողը սկսում է վերանայել իր պահվածքն ու փորձում երեխայի հետ հարաբերություններում լինել ավելի հարմարվող ու հանդուրժող: Ծնողի համար այդ համագործակցության արդյունքում հասկանալի է դանում սեփական երեխայի պահանջմունքները, ցանկություններն ու երազանքները, քանի որ ուսուցչից ստացած տեղեկատվության հիմնական մասին նա չի տիրապետում: Այսպիսով այս համագործակցության շնորհիվ ծնողի համար նկատելի փոփոխություններից են.

 դառնում է ավելի հոգատար,

 սկսում է ավելի շատ գնահատել երեխայի ձեռքբերումները,

 առավել գրագետ մոտեցում է ցուցաբերում երեխայի կրթության և դաստիարակության գործընթացին,

 ավելի ինքնավստահ է որոշումներ կայացնելիս,

 սկսում է շատ ուշադրություն դարձնել սեփական գիտելիքների մակարդակի բարձրացմանը,

 երեխային տալիս է հնարավորություն՝ ավելի վստահորեն արտահայտելու սեփական տեսակետները, հիմնխնդիրները,

 դրական հարաբերություններ է ստեղծում իր երեխայի ուսուցիչների հետ,

 ամբողջապես տիրապետում է երեխայի վիճակի մասին տեղեկություններին,

 միջոցներ է ձեռք առնում երեխայի հիմնխնդիրները լուծելու նպատակով:

Այսպիսով, կարող ենք վերահաստատել այն պնդումը, որ ուսուցչի համագործակցումը սովորողի ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ սովորողի կրթության կազմակերպան ու դաստիարակության մեջ ունի առանցքային նշանակություն:

## Գործնական աշխատանք

Երեխաներն աճում ու զարգանում են երկար տարիների ընթացքում. յուրաքանչյուր երեխա զարգանում է անհատապես՝ իր ուրույն տեմպով ու ոճով:Որպես 9-րդ դասարանի դասղեկ՝ զրուցելով ծնողների հետ՝ նկատեցի նրանց անհագստությունը՝ «վարքագծային խնդիրների »հետ կապված:Պարզապես պետք է ծնողին ցույց տալ , որ երեխան անցնում է զարգացման բնական փուլերից մեկով, ինչի հետևանքով փոփոխվում է նրա վարքագիծը:

Այս «խնդիրների»լուծման նպատակով սեպտեմբերի առաջին տասնօրյակում հրավիրել եմ ծնողական ժողով , որի օրակարգի կետերից մեկն էր՝ Դեռահասության տարիքի ագրեսիայի դրսևորումը և դրա պարպման մեթոդական առաջարկներ:

Նպատակը-Հասկանալ, թե ծնողի և ուսուցչի կողմից որ մոտեցումները կամ վերաբերմունքը կարող է օգնել դեռահասներին զգալ ապահով, հարգված, սիրված, ընկալված, գնահատված:

Կարճ դասախոսությամբ ներկայացրել եմ ՝ ինչ է դեռահասության տարիքը:Այն կապվուն է երեխայի օրգանիզմի վերակառուցողական գորխընթացների և սեռական հասունացման հետ:Հորմոնալ փոփոխությունների արդյունքում փոխվում է երեխայի բնավորությունը:Դեռահասը ո՞չ երեխա է, ո՞չ մեծահասակ:Ամերիկացի հոգեբան Կ. Լևինի կարծիքով դեռահասները գտնվում

են երկու խմբերի սահմանագծում. նրանց այլևս չեն բավարարում մանուկներին ներկայացվող պահանջները, իսկ դեռահասները չեն ընդունում նրանց իբրև հասուն մարդ:Նրանց վարքագծում ի հայտ է գալիս մծտական անհանգստություն, կենտրոնանալու դժվարություն, ամաչկոտություն, կաշկանդվածություն, տեղի-անտեղի զայրույթ, ըմբոստություն և այլն:Ինքնադրսևորվելու, ինքահաստատվելու ուղիներ փնտրելով՝ նրանք հակամարտության մեջ են մտնում ծնողների, ընկերների, երբեմն նաև ուսուցիչների հետ:

Ապա ծնողները լրացնում են հարցաթերթիկը.

Երեխայի կրթության և դաստիարակության հարցում ես՝որպես ծնող,սովորաբար՝

| | | Ճիշտ է | Ճիշտ չէ |
|---|---|---|---|
| 1 | Քննադատում և բարկանում եմ | | |
| 2 | Արգելքներ եմ դնում | | |
| 3 | Սպառնում եմ | | |
| 4 | Պատժում եմ | | |
| 5 | Կասկածում եմ երեխայի ասածին | | |
| 6 | Քննադատում եմ երեխայի գնահատականները | | |
| 7 | Խուզարկում եմ նրա սենյակը | | |
| 8 | Չեմ ընդունում նրա կարծիքը, եթե տարբերվում է իմ կարծիքից | | |
| 9 | Հազվադեպ եմ իմ երեխայի հետ քննարկու որևէ իրավիճակ | | |
| 10 | Համեմատում եմ նրան իր ընկերների հետ | | |

«Ի՞նչ պետք է ստանա երեխան ծնողից». հարցին պատասխանեցին՝

✔սեր

✔հարգանք

✔ընկալում և կարեկցանք

✔գնահատանք

Ծնողները և ուսուցիչները պետք է ցուցաբերեն ներքոբերյալ մոտեցումները և վերաբերմունքը.

✔լսեն երեխաներին կենտրոնացված, ուշադիր և մինչև վերջ

✔երեխաներին հնարավորություն տալ արտահայտել իրենց կարծիքները և զգացմունքները, ընդունել, որ երեխաների կարծիքը կարող է տարբերվել ծնողի և ուսուցչի կարծիքից

✔երեխաներին ներգրավել դասարանական և ընտանեկան աշխատանքներում

✔խրախուսել , գնահատել, գովասանքի արժանացնել

✔դրսևորել անկեղծություն:

Հետևություն- դաստիարակության բացասական մեթոդները արդյունավետ չեն և նույնիսկ կարող են վնասել երեխային:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված հետազոտական աշխատանքից հանգեցինք այն եզրակացության , որ

✔ուսուցիչ-աշակերտ սերտ կապից բացի ակտիվ ու կենսական լինի նաև ուսուցիչ-ծնող երկկողմանի մշտական փոխհամագործակցությունը և փոխվստահությունը

✔ կառուցողական ու բարենպաստ հարաբերությունների հաստատումը պետք է ունենա ընդհանուր նպատակ

✔ ուսուցիչն ու ծնողը պարտավոր են միմյանց տեղյակ պահել սովորողի խնդիրների մասին ու համատեղ փորձեն ելքեր գտնել:

✔ուսուցիչն ու սովորողի ծնողը պետք է փոխադարձաբար հարգեն միմյանց՝ հաշվի նստելով քաղաքավարության կանոնների ու էթիկայի նորմերի հետ:շ

✔ ուսուցիչը պետք է իրականացնի ծնողական ժողովներ՝ նպատակ ունենալով քննարկել առկա խնդիրները:

✔մանկավարժական կոլեկտիվը ծնողների հետ համագործակցության հարցում պետք է միասնական մոտեցումներ ցուցաբերի՝ ի շահ սովորողի:

- ✔ այս հարաբերություններում շատ կարևոր են մարդկային որակները, ուստի երկուստեք հարկավոր է լինել հանդուրժող և արդարամիտ
- ✔ ականջալուր լինի բոլոր աշակերտներին և վերաբերվի նրանց առանց խտրականության

## Օգտագործված գրականության ցանկ


1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808 ՀՀ Կառավարության որոշում:

2. https://www.arlis.am/documentview.aspx?docid=119102 ՀՀ ընտանեկան օրենսգիրք:

3. www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք:

4. https://escs.am/files/files/2021-02- 08/c23df9485819d1e8030dcca275ff2d7d.pdf Ա. Պետրոսյան, «Դասղեկի աշխատանքի կազմակերպումը դպրոցում»:

5. http://www.ysu.am/files/1-1511355539-.pdf ՀՊՄՀ, «Մանկության հիմնախնդիրը ժամանակակից հայ ընտանիքում», Երևան, 2016:

6. http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/mankavarjutyun.pdf Յու. Ամիրջանյան, Ա. Սահակյան, «Մանկավարժություն», Երևան, 2005

7. «Ընտանիք -դպրոց» ամսագրեր